ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐՇԱԿ ՔԵՐՈԲՅԱՆԻ՝ ՈՒԿՐԱԻՆԱ (Ք. ԿԻԵՎ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**

   Արշակ Քերոբյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Քաղաք Կիև (Ուկրաինա), 2022թ. փետրվարի 7-ից 9-ը:

4. **Հրավիրող կողմը.**

   Ուկրաինայի թվային փոխակերպման նախարարություն:

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «DiiaSummit» գագաթնաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Միջոցառման շրջանակներում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության թվայնացման վարչության պետ Արշակ Քերոբյանը մասնակցել է գագաթաժողովին, որից հետո տեղի ունեցան պանելային քննարկումներ, որտեղ մասնակցում էին պատվիրակներ՝ Հայաստանից, Էստոնիայից, Ավստրիայից, Իսպանիայից, Սլովակիայից և Ադրբեջանից: Պանելային քննարկումներին մասնակցում էին նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Քննարկված հիմնական և կարևորագույն դրույթները.

1) **Բոլոր փաստաթղթերի թվային համարժեքը, ներառյալ վարորդական իրավունքի և մեքենայի տեխնիկական զննման կտրոնի էլեկտրոնային փոխանցումը և ծննդյան վկայականի գրանցումը մեկ սեղմումով:**

2) **Տուգանքների, հարկերի վճարում, փաստաթղթի ստացում և դատվածության վերաբերյալ տեղեկատվություն. ակտիվ կատարողական թերթի և դատաքննության մասին ծանուցում:**
3) **Տարբեր մարզերից առցանց հասանելիությամբ կրթական ծրագրեր: Դպրոցների համար սարքավորումների գնում առցանց դասեր անցկացնելու հնարավորության համար:**
4) **Ուսանողների էլեկտրոնային անցագրերի ավելացում:**
5) **Սուբսիդավորվող/անվճար հեռախոսներ և կրթական հարթակ տարեցների համար:**
6) **Հեռավոր շրջանների բնակչությանը կամ տարեցներին ինտերնետին միացում և սուբսիդավորում:**
7) **Բիզնեսի աջակցության էկոհամակարգի ստեղծում՝ օֆլայն խորհրդատվական կենտրոններով: Փոքր և միջին բիզնեսը կկարողանա առցանց բիզնես բացել և մեկ կենտրոնում ստանալ բիզնես ծառայությունների ողջ տեսականին: Բացի այդ, այս կենտրոնները կապված են ներդրողների և բիզնես հրեշտակների ցանցի հետ՝ ստարտափ աքսելերացիայի համար: Նախաձեռնության մաս են կազմում նաև սուբսիդիաները:**
8) **SS ոլորտում արտոնյալ հարկային ռեժիմներով և անգլիական իրավունքի կիրառմամբ վերաբնակեցման կամ բիզնես բացելու համար աջակցություն:**
9) **Կայքում շինարարության թույլտվությունն այժմ հնարավոր է առցանց դիմումի միջոցով՝ առանց մարդկանց հանդիպելու:**
10) **Բնակության վայրի գրանցումը և դրա փոփոխությունը կարող են կատարվել ամբողջությամբ էլեկտրոնային եղանակով:**
11) **UST, USAID, UKIAD, GIZ եւ այլն աջակցությամբ:**

Պանելային քննարկումների ժամանակ հայկական կողմից ելույթ ունեցավ ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ից Հայկ Մարգարյանը, ով ներկայացրեց «Թվային փոխակերպումները՝ Հայաստանում» վերտառությամբ զեկույցը, որը մշակվել էր ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Թվայնացման վարչության հետ համատեղ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

1.Ուկրաինայի Թվային փոխակերպման Նախարարության աշխատակիցների հետ հանդիպում՝ Կիև, 09.02.2022

2. UNIT.City Ուկրաինայի առաջին ինովացիոն պարկի աշխատակիցների հետ հանդիպում՝ Կիև, 09.02.2022

Հանդիպման ընթացքում քննարկվեց հետևյալը՝

- **Diya.City նախագծի ղեկավար Դիանա Ռակուսը ներկայացրեց Ուկրաինայի առաջին ինովացիոն պարկի՝ UNIT.City-ի գործունեության ոլորտները, UNIT.City-ի ամբողջ տարածքը և շինությունները, ինչպես նաև ներկայացրեց ապագայում կառուցվելիք շինությունները՝ հատկապես դպրոցները, մանկապարտեզները, հիվանդանոցները և բնակելի տները:**
- **Դիանա Ռակուսը ներկայացրեց, թե ինչպես են տեղի ունենում UNIT.City-ում կրթական պրոցեսները. 16-63 տարեկան յուրաքանչյուր ոք կարող է դիմել և անցնելով համապատասխան մրցութային փուլը սկսել ծրագրավորում սովորել հենց կենտրոնում, այնուհետև հաջող ծրագրերը անցնելով աքսելերացիոն փուլ, անցնում են բիզնեսի գնահատման փուլ և ֆինանսավորվում:**
- **Ուկրաինական ստարտափ հիմնադրամի տնօրեն Պավել Կարտաշովը հանդիպման ընթացքում ներկայացրեց իրենց կողմից մշակված առցանց հարթակը, որտեղ ստարտափները կարող են տեղադրել իրենց նախագծերը, այնուհետև անկախ գնահատողների կողմից գնահատվել և հաջողության դեպքում ֆինանսավորվել:**
- **ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հայկ Մարգարյանը ներկայացրեց ազգային կենտրոնի գործունեությունը և կարևորեց համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները և հեռանկարները:**
- **ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության Թվայնացման վարչության պետ Արշակ Քերոբյանը կարևորեց միասնական հարթակի դերը, ինչպես նաև քննարկվեց Հայաստանում նույնպես նմանատիպ հարթակ ստեղծելու հարցը:**

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Բանակցություններ են տարվում Ուկրաինայի Թվային փոխակերպման նախարարության հետ հանդիպման եղանակի ձևի ժամկետների վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արշակ Քերոբյան

14.02.2022թ.